Հաստատված է
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ամբիոնի
«23» 01. 2023 թ.-ի նիստում: Արձ. № 2
Ամբիոնի պետ՝ Գ. Խուդոյան

« »----------2023 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

/ Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա/

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպում
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		**ՀՀ ոստ. կրթահամալիրի միջին մասնագիտության ֆակուլտետ**
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		**Ոստիկանության սպա**
ԱՄԲԻՈՆ ▪ **էլ հասցե**		**Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն** **E-mail. varchakan@ro.ru**
ՀԵՂԻՆԱԿ		Վ. Ավագիմյան, դոցենտ E-mail. vavagimyanvlad56@gmail.com 093566111
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		**ուս. տարվա 4-րդ կիսամյակ**

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**3 (երեք)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 66 ժամ, որից լսարանային 44, որից 22 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար, 10 ժամ գործնական պարապմունքներ, 22ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը 4 լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է ամփոփիչ դիֆերենցված ստուգարքով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		«Ոստիկանության վարչական գործունեություն» մոդուլի իմացության վրա;
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		Դասընթացի բովանդակությունը ներկայացված է հետևյալ

		բլոկների տեսքով՝ • Ոստիկանության Ժողովրդավարական հիմունքները, սկզբունքներն ու առանձնահատկությունները: • Համայնքային ոստիկանությունը որպես ժողովրդավարական ոստիկանության արտահայտություն • Համայնքային ոստիկանության հասկացությունը, գաղափարախոսությունն ու ռազմավարությունը: • Հայաստանի Հանրապետության ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայության իրավական կարգավորումը, գործառույթները • Ոստիկանություն-հասարակություն փոխհամագործակցության հաստատման հիմնական ռազմավարությունները պրակտիկ աշխատանքում:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐՆԵՐ**		Դասընթացի հիմնական նպատակն է ապագա աշխատակիցներին տալ համայնքային հիմունքնարով իր գործառույթներն իրականացնող ոստիկանական ծառայության կազմակերպման ու իրականացման համար համապարփակ գիտելիքներ, ունակություններ, կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են արդի համայնքային ոստիկանության ծառայողին ազգաբնակչության հե գործընկերային հարաբերությունների և փոխվստահության մթնոլորտի ձևավորման և հաստատման, համայնքում ոստիկանի հեղինակության բարձրացման, տարածքում համայնքի հետ համատեղ իրավակարգի ամրապնդման, հանցագործությունների նվազեցման, նախականխման, կանխման, խափանմանն ու բացահայտմանն ուղղված իր պարտականություններն իրականացնելու համար: Դասընթացի խնդիրներն են՝ • ՀՀ ՆԳՆ ոստիկանության ապագա ծառայողի կողմից համայնքային ոստիկանության տեսուչին բնորոշ գործառոթային պարտականությունների կատարման ձևերի ու մեթոդների յուրացում • Բնակչությանը հուզող խնդիրների լուծման գործում սպասարկվող տեղամասի բնակչության, պետական կառույցների, տեղական ինքնակառավարման և այլ շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների ներգրավման միջոցների կիրառում • ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության տեսուչին անհրաժեշտ մասնագիտական որակների ձևավորում • Սովորողների մասնագիտական պատրաստականության իրականացում:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***1. Կարողանա***		*Սովորողները պետք է կարողանան՝* • Տարբերակել նախաձեռնող և արձագանքող ոստիկանական ծառայությանների առանձնահատկությունները:

		• Ուսումնասիրել սպասարկվող վարչական տարածքի առանձնահատկությունները, վերլուծել իրավախախտումներ ծնող պատճառներն ու պայմանները, տրիրապետել դրանց վերացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացման մեթոդներին ու ձևերին: • Փոխվստահության ձևավորման նպատակով հաղորդակցվել տարածքի բնակչության տարբեր կատեգորիաների հետ, տեղական խնդիրներին տալ տեղակն և տևական լուծումներ: • Կազմել պրոֆիլակտիկ հաշվառման գործեր, վարել ոստիկանական հենակետում քաղաքացիների ընդունելության. հանցագործությունների և պատահարների մասին ստացված հաղորդումների գրանցման մատյանները: • Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարզել կենցաղային հողի վրա ծագող վիճաբանությունների և իրավախախտումների պատճառներն ու պայմանները և դրանց նախականխման նպատակով համագործակցել վարչական տարածքի պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ու միավորումների հետ: • Կիրառել անհատական և ընդհանուր պրոֆիլակտիկայի իրավական միջոցները և մասնագիտական հմտությունները հանցագործությունների և իրավախախտումների նախականխման, կանխման և խափանման ուղղությամբ: • Ձեռք բերված վստահության հիման վրա հայտնաբերել տարացքի օպերատիվ իրավիճակի վրա ազդեցություն գործող անհրաժեշտ տեղեկությունների նոր աղբույրներ և օգտագործել դրանք նախականխման աշխատանքներում: • կատարել գործնական առաջադրանքներ, կազմել փաստաթղթեր, լուծել խնդիրներ կամ թեստեր: *Սովորողները պետք է իմանան՝* • Բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման • Կամավորության սկզբունքներով հանցականխման աշխատանքներին բնակչության մասնակցության մակարդակի բարձրացման • Տարածքում առկա խնդիրների լուծման գործառույթներում նախաձեռնողական մոտեցման • և տարացքում կատարված հանցագործությունների ու վարչական իրավախախտումների բացահայտմանն ուղղված նոր ձևերի, մեթոդների և հնարքների օգտագործման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. ՀՀ Սահմանադրություն / 2015 թ. փոփոխություններով/ Ե. 2015 թ. 2. ՀՀ Ոստիկանության մասին օրենք. Ե. 2001 թ. 3. ՀՀ Ոստիկանությունում ծառայության մասին օրենք. Ե. 2002 թ. 4.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումը «ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու

		և ՀՀ կառավարության 18.08.2006թ. թիվ 1233 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» : 5. ՀՀ Ոստիկանության պետի 13.01.2015թ. թիվ 11-Ա հրամանը Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց կարգը հաստատելու մասին, 6. ՀՀ Ոստիկանության պետի 30.04.2015թ. թիվ 980-Ա հրամանը «Համայնքային խորհուրդների կազմավորման, դրանց գործունեության կազմակերպման և փոխհամագործակցության ուղեցույցը հաստատելու մասին», 7. Ուղեցույց «Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար, 2013 թ., 8.Ոստիկանություն-հասարակություն գործընկերության հաստատման լավագույն փորձը, ԱՀԿ Երևանյան գրասենյակ. Ե. .2008. թ 9. «Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց» -ձեռնարկ. ԱՀԿ Երևանյան գրասենյակ. Ե. .2007. թ 10. Համայնքային հիմունքներով ոստիկանության գաղափարախոսությունը և սկզբունքները, SEESAC, Երևան, 2006 թ.
Լրացուցիչ		Ֆ.Հարիս, Ներուժի զարգացման դերը ոստիկանության համակարգի բարեփոխումներում, Ե., 2007 թ. М.Капарини, О.Маренина, Реформирование полиции в странах центральной и восточной Европы: Процесс и прогресс. ООО Прокон. 2014 г. Руководство по демократическим основам полицейской деятельности. Вена. ОБСЕ. 2006 г.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ՝ ուսումնառության արդյունքի գնահատում /գերազանց, լավ, բավարար, անբավարար/	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		**Գերազանց**	**9-10**
		Լավ	**7-8**
		Բավարար	**4-6**
		Անբավարար	**0-3**
		Չներկայացած	**-**
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սույն դասընթացի համար նախատեսված է դիֆերենցված ստուգարքի անցկացում: Սովորողը դասընթացից կարող է ունենալ մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը,	

		ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Կիսամյակի համար նախատեսված ուսումնառության արդյունքների ընդհանուր քանակն ըստ չափորոշիչի՝ 6-ն է:
Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

ՕՐ/ՇԱԲԱԹ	ԹԵՄԱ/ԺԱՄ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
1-ին շաբաթ	**Ներածական դասախոսություն.** **ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպում դասընթացի առարկան, նպատակն ու խնդիրները:** (Դասախոսություն՝ 2 ժամ)	**Ներածական դասախոսություն, քննարկումներ տեղում.** • Ինտերակտիվ զրույց, • դասախոսություն (ավանդական)	**Ներածական դասախոսության արդյունքով բանավեճ-քննարկում.** **1.** դասընթացի նպատակի ձևակերպում և հիմնավորում, **2.** առանձնահատկությունների ներկայացում և քննարկում **3.** առարկայի այլ գիտությունների հետ կապի կոնկրետ օրինակների ներկայացում: **«Առարկան իմ մասնագիտության շրջանակում»**	**Ընթացիկ գնահատում.** Հետաքրքրության ցուցաբերում, Առանձնահատկությունների նախանշում, Հետադարձ կապ՝ Բանավոր հիմնավորումներ:
2-րդ շաբաթ	**Ոստիկանության գործունեության ժողովրդավարական հիմքերը:** (Դասախոսություն՝ 2 ժամ)	**Տեսակը՝** դասախոսություն: **Նպատակը՝** ներկայացնել ժողովրդավարական ոստիկանության հիմնարար սկզբունքները և նրանց նշանակությունը ոստիկանության հանդեպ վստահության և հասարակական աջակցության ձեռքբերման գործում: **Քննարկվող հարցերը՝** **1**. «Ոստիկանության ուժ» և, «ոստիկանական ծառայություն», հասկացությունը և դրանց էությունը: **2**. Ոստիկանության գործունեության, արձագանքող, և նախաձեռնող, մոտեցումները և դրանց էությունը:	**Համապատասխան սկզբնաղբյուրների մշակում, վերլուծական աշխատանքի ներկայացում.** 1. առարկայի հետազոտության մեթոդների դասակարգում 2. հետազոտության կոնկրետ մեթոդների ուսումնասիրություն 3. ժողովրդավարական ոստիկանության բնորոշում:	**Ընթացիկ գնահատում.** Համեմատական վերլուծություն Ոստիկանության ուժ» և, «ոստիկանական ծառայություն», հասկացությունների տարբերակում Կոնկրետ օրինակների վրա հիմնված տեսակետի արտահայտում և բանավոր հիմնավորում, Դատողություն, Հետադարձ կապ

		Տեղեկատվական նյութեր՝ 1. «Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց - ձեռնարկ». ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ. Ե. 2007. թ էջ 13-16: 2 Համայնքային հիմունքներով ոստիկանության գաղափարախոսությունը և սկզբունքները, SEESAC, Երևան, էջ.9-13:		
2-րդ շաբաթ	**Ոստիկանության գործունեության ժողովրդավարական հիմքերը** /սեմինար 2 ժամ/	**Տեսակը՝** Սեմինար **Նպատակը՝** Ամրապնդել ոստիկանության գործունեության ոլորտի բարեփոխումների առանցքային ուղղությունների վերաբերյալ սովորողների գիտելիքները Հանրության և ոստիկանության փոխգործակցության նոր մշակույթի վերաբերյալ հստակ տեսակետի ձևավորում **Քննարկվող `հարցերը՝** «Արձագանքող» և «Նախաձեռնող» ոստիկանության գործելաոճերի առանձնահատկությունները «Ոստիկանական ուժ» և «ոստիկանական ծառայություն» հասկացությունների տարբերակումը	**Թիմային աշխատանք** **1.** Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում **2.** պրոբլեմային հարցերի քննարկում **3.** «Արձագանքող» և «Նախաձեռնող» ոստիկանության գործելաոճերի տարբերակում Թեմայի պատմողական նկարագրական վերարտադրություն, տրամաբանության և հաջորդականության ապահովում, նյութի գիտակցական ըմբռնում, թերացումների և բացթողումների շտկում և վերացում:	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)** **Իրականացվում է 1-ին ուսումնառության արդյունքի գնահատում:**
Ուսումնառության արդյունք 1:				
3-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային**	**Տեսակը՝** դասախոսություն	**Համապատասխան**	**Ընթացիկ գնահատում**

	ոստիկանության հասկացությունը: Համայնքային ոստիկանության գաղափարախոսությունը և ռազմավարությունը /դասախոսություն 2 ժամ/	**Նպատակը՝** ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայության դերի և նշանակության ընկալում: Ապագա համայնքային ոստիկանի տեսական գիտելիքների և գործնական հմտությունների զարգացում: **Քննարկվող հարցերը՝** 1.Ոստիկանություն-հասարակություն գործընկերության պատմությունը և արդի միջազգային փորձը 2.Հայաստանի Հանրապետությունում համայնքային ոստիկանության մոդելի ներդրման անհրաժեշտությունն ու առաջին փորձը 3. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայության կազմակերպման իրավական հիմունքները: 4. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործունեության նպատակները, կազմակերպչական հիմունքները, հիմնարար սկզբունքներն ու մեթոդները: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված	**սկզբնաղբյուրների մշակում, զրույց մշակված գրակության հարցադրումների շուրջ** 1.Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2.պրոբլեմային հարցերի քննարկում 3.Ոստիկանություն-հասարակություն գործընկերային հարաբերությունների հաստատման անհրաժեշտության հիմնավորում 4. Սպասարկվող տեղամասում անվտանգության խնդիրների լուծման դործում բնակչության ներգրավման առկաա հիմախնդիրներն ու մարտահրավերները 5.Համայնքային ոստիկանության գաղափարախոսության ընդհանրությունը և ռազմավարության առանձնահատկությունները տարբեր երկրներում:	Հետաքրքրության ցուցաբերում, Առանձնահատկությունների նախանշում, Հետադարձ կապ՝ Բանավոր հիմնավորումներ:

		Կարգ: 2.Ողեցույց «Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար» 2013թ էջ. 3-10 3.Համայնքային հիմունքներով ոստիկանության գաղափարախոսությունը և սկզբունքները, SEESAC, Երևան, էջ.16-19:		
4-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության հասկացությունը: Համայնքային ոստիկանության գաղափարախոսությունը և ռազմավարությունը** /սեմինար 2 ժամ/	**Տեսակը՝** Սեմինար **Նպատակը՝** Ամրապնդել ՀՀ ՆԳՆ ոստիկանության գործունեության ոլորտի բարեփոխումների առանցքային ուղղությունների վերաբերյալ սովորողների գիտելիքները Հանրության և ոստիկանության փոխգործակցության նոր մշակույթի վերաբերյալ հստակ տեսակետի ձևավորում **Քննարկվող հարցերը՝** 1.Համայնքային ոստիկանության դասական և իրավական սահմանումները: 2.Համայնքային ոստիկանության գաղափարախոսությունը և ռազմավարությունը 3.Համայնքային ոստիկանության	**Համապատասխան սկզբնաղբյուրների մշակում, զրույց մշակված գրակության հարցադրումների շուրջ** Թեմայի պատմողական նկարագրական վերարտադրություն, տրամաբանության և հաջորդականության ապահովում, նյութի գիտակցական ըմբռնում, թերացումների և բացթողումների շտկում և վերացում 1. Ներկայացվում են՝ համայնքային ոստիկանության դասական և իրավական հասկացությունները, 2. Ներկայացվում են համայնքային ոստիկանության գաղափարախոսության ընդհանրությունը և ռազմավարության առանձնահատկությունները տարբեր երկրներում: 3. Մեկնաբանվում են տեսանելի և հասանելի, ճանաչող և ճանաչված, նախաձեռնող և խնդրակենտրոն	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն 1. Համայնքային ոստիկանության մոդելի ներդրման անհրաժեշտության հինմավորում 2. Տեղական խնդիրներին տեղական լուծումներ տալու հասկացության մենաբանում: 3.Բնակչության ներգրավման առկա խոչընդոտների ներկայացում և դրանց վերացման ուղղությամբ կարծիքների արտահայտում; 4. Տարբերակել համայնքային ոստիկանության և տեղամասային տեսուչների գործունեության մեթոդների առանձնահատկությունները: 5. Համայնքային ոստիանության

		գործունեության հիմնարար սկզբունքները:	համայնքային ոստիկանության տեսուչների մոտեցումները համայնքում առկա խնդիրների լուծման գործընթացում:	սկզբունքների ինքնուրույն վերլուծություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի**
4-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները:** /դասախոսություն 2 ժամ/	**Տեսակը՝ դասախոսություն** **Նպատակը՝** Սպասարկվող վարչական տարածքում հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման և խափանմանն ուղղված գործառութային պարտականությունների իրականացման նպատակով ապագա համայնքային ոստիկանի տեսական գիտելիքների և գործնական հմտությունների զարգացում: **Քննարկվող հարցերը՝** 1. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները սպասարկվող տեղամասի ընդհանուր նկարագրին և օպերատիվ իրավիճակին տիրապետելու ուղղությամբ: 2. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները հանցագործությունները և վարչական	**Համապատասխան սկզբնաղբյուրների մշակում, զրույց մշակված գրակության հարցադրումների շուրջ** 1.Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2.Պրոբլեմային հարցերի քննարկում 3. Տեղամասում առկա խնդիրների տեսակների բնորոշում 4.Սպասարկվող տեղամասի առանձնահատկություններին ծանոթանալու և տիրապետելու ուղղությամբ գործառույթների ներկայացում 5.Ըստ ոլորտների գործառույթների տեսաբախշում:	**Ընթացիկ գնահատում** Հետաքրքրության ցուցաբերում, Առանձնահատկությունների նախանշում, Հետադարձ կապ՝ Բանավոր հիմնավորումներ:

		իրավախախտումները նախականխելիս, կանխելիս և խափանելիս: 3. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները ընտանեկան բռնության դեմ պայքարում: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2.ՀՀ Ոստիկանության պետի 13.01.2015թ. թիվ 11-Ա հրամանը «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց կարգը հաստատելու մասին»:		
5-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները:** /սեմինար 2 ժամ/	**Տեսակը՝ Սեմինար** **Նպատակը՝** Ամրապնդել համայնքային ոստիկանության տեսուչների կողմից տեղամասում նախաձեռնողական մոտեցմամբ իրականացվող գործառոյթների վերաբերյալ տեսական գիտելիքները:	**Համապատասխան սկզբնաղբյուրների մշակում, ինտերակտիվ զրույց** Թեմայի պատմողական նկարագրական վերարտադրություն, տրամաբանության և հաջորդականության ապահովում, նյութի գիտակցական ըմբռնում, թերացումների և բացթողումների շտկում և վերացում 1. Ներկայացվում են վարչական	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն **(Գնահատման չափանիշները և**

		Քննարկվող հարցերը՝ 1.ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները տարածքի առանձնահատկություններին տիրապետելու ուղղությամբ: 2.ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները քաղաքացիների կյանքի և առողջության, նրանց գույքի, հասարակական կարգի և հասարակական անվտանգության ապահովման ուղղությամբ: 3.ՀՀ ՆՀՆ համայնքային ոստիկանության գործառույթները սպասարկվող տեղամասում հանցագործությունների և վարչական իրավախախտումնե-րի նախականխման, կանխման, խափանման ու հայտնաբերման ուղղությամբ: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ	տարածքին բնորոշ առանձնահատկությունները: 2. Մեկնաբանվում են համայնքում առկա խնդիրների տեսակները և դրանց արձագանքման առանձնահատկությունները: 3. Ցուցաբերում են համյնքային ոստիկանության նախականխիչ գործառույթների վերաբերյալ տեսական գիտելիքներ:	**չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)** **Իրականացվում է 2-րդ ուսումնառության արդյունքի գնահատում:**
Ուսումնառության արդյունք 2:				
6-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող**	**Տեսակը՝** դասախոսություն **Նպատակը՝** Տիրապետել հենակետերում ծառայության կազմակերպման	**Համապատասխան սկզբնաղբյուրների մշակում,** 1. Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում	**Ընթացիկ գնահատում** Հետաքրքրության ցուցաբերում, Առանձնահատկությունների

	պահանջները և հենակետում ծառայության կազմակերպման կարգը: /դասախոսություն 2 ժամ/	միջոցով բնակչությանը մոտ գտնվելու, իրավախախտումներին և պատահարներին արագ արձագանքելու, տարածքի օպերատիվ իրավիճակը վերահսկելու գործառույթներին **Քննարկվող հարցերը՝** 1.Համայնքային ոստիկանության հենակետերի նշանակությունը և նպատակները: 2.Հենակետին ներկայացվող պահանջները 3.Հենակետում և աշխատասենյակներում համայնքային ոստիկանության ծառայության կազմակերպման կարգը: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2.ՀՀ Ոստիկանության պետի 13.01.2015թ. թիվ 11-Ա հրամանը «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց կարգը հաստատելու մասին», 3.Ողեցույց «Համայնքային	2.Պրոբլեմային հարցերի քննարկում 3. Բնակչության հետ գործընկերային հարաբերությունների հաստատման գործընթացում հենակետի դերի և նպատակների ներկայացում 4. Հենակետերում և ոստիկանության աշխատասենյակներում ծառայության կազմակերպման առանձնահատկությունների ներկայացում;	նախանշում, Հետադարձ կապ՝ Բանավոր հիմնավորումներ Կարծիքների փոխանակում

		ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար» 2013թ.		
7-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները և հենակետում ծառայության կազմակերպման կարգը:** /գործնական 2 ժամ/	**Տեսակը՝** գործնական • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում • փաստաթղթերի ինքնուրույն վարում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը հենակետերին ներկայացվող պահանջների, հենակետերում ծառայության կազմակերպման կարգի առանձնահատկությունների, դերի և նշանակության վերաբերյալ **Քննարկվող հարցերը** 1.Հենակետերի և աշխատասենյակների նպատակը 2.Հենակետին ներկայացվող պահանջները 3.Հենակետերում և աշխատասենյակներում ծառայության կազմակերպման կարգը: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2.ՀՀ Ոստիկանության պետի	1. Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2. Պրոբլեմային հարցերի քննարկում 3 Հենակետի նպատակների ներկայացում 4.Հենակետերում հերթափոխերով ծառայության կազմակերպման աշխատանքային գրաֆիկների կազմում 5. Քաղաքացիների ընդունելության մատյանների վարում Թեմայի պատմողական նկարագրական վերարտադրություն, տրամաբանության և հաջորդականության ապահովում, նյութի գիտակցական ըմբռնում, հենակետերում փաստաթղթերի վարման կարգի տիրապետում և գործնական վարում, թերացումների և բացթողումների շտկում և վերացում	Հետադարձ կապ-վերլուծություն Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն, սահմանված կարգի համաձայն հենակետում առկա փաստաթղթերի գործնականում վարման կարողություն, աշխատանքային գրաֆիկների կազմման ընթացքում ստեղծագործական մոտեցում: **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**

		13.01.2015թ. թիվ 11-Ա հրամանը «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց կարգը հաստատելու մասին», 3.Ողեցույց «Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար» 2013թ.		
8-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության համագործակցությունը հասարակակության, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:** /դասախոսություն 2 ժամ	**Տեսակը՝** դասախոսություն • Ինտերակտիվ զրույց, • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել համայնքային ոստիկանության կողմից սպասարկվող վարչական տեղամասերում գործող պետական և ոչ պետական կառոյցների հետ համագործակցության կարևորությունը, նպատակները, ձևերը և առանձնահատկությունները **Քննարկվող հարցերը** **1.**Համայնքային ոստիկանության համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման	1.Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2.Պրոբլեմային հարցերի քննարկում 3.Համագործակցության հետ կապված հիմնախնդիրների և խոչընդոտների քննարկում 4. Համագործակցության տեսակների, միջոցների և մեթոդների ներկայացում 5. Համայնքային խորհուրդների կազմավորման գործընթացում առաջացող պրոբլեմների նկարագրում և դրանց հաղթահարման ուղիների և մեթոդների ներկայացում	**Ընթացիկ գնահատում.** Հետադարձ կապ-վերլուծություն Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Համագործակցության կայացման ընթացքում առաջացող հնարավոր պրոբլեմների վերաբերյալ սեփական տեսակետների արտահայտում, վերլուծողական կարողություն. հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**

		և այլ մարմինների հետ 2.Համայնքային ոսըիկանության տեսուչների գործառոյթները սպասարկվող տեղամասում համայնքային խորհուրդների ձևավորման ուղղությամբ; 3.Համայնքային խորհուրդների նպատակները, գործունեության կարգը: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2. ՀՀ Ոստիկանության պետի 30.04.2015թ. թիվ 980-Ա հրամանը «Համայնքային խորհուրդների կազմավորման, դրանց գործունեության կազմակերպման և փոխհամագործակցության ուղեցույցը հաստատելու մասին»		
9-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության համագործակցությունը հասարակակության, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:** /Սեմինար 2 ժամ/	**Տեսակը՝** Սեմինար արապմունք • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը հասարակության հետ համագործակցության տեսակների, ձևերի և մեթոդների, համայնքային խորհուրդների կազմավորման և նրանց աշխատանքներում	1 Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2. Պրոբլեմային հարցերի քննարկում 3 Համագործակցության նպատակների և նրան խոչընդոտող հանգամանքների ներկայացում 4.Համայնքային խորհուրդների կազմավորման կարգի ներկայացում Թեմայի պատմողական նկարագրական վերարտադրություն, տրամաբանության և հաջորդականության ապահովում,	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն, համայնքային խորհուրդների կազմավորման վերաբերյալ զեկուցագրի կազմման և համայնքային խորհուրդների գրանցամատյանի վարման կարգի իմացություն և դրանց գործնականում վարման կարողություն, խորհուրդի անդամության թեկնածուների հետ

		համայնքային ոստիկանության տեսուչների ներգրավվման գործառույթների վերաբերյալ, **Քննարկվող հարցերը** **1.** ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ 2. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության տեսուչների գործառոյթները սպասարկվող տեղամասում համայնքային խորհուրդների ձևավորման ուղղությամբ; 3.Համայնքային խորհուրդների նպատակները, գործունեության կարգը: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2. ՀՀ Ոստիկանության պետի 30.04.2015թ. թիվ 980-Ա հրամանը «Համայնքային խորհուրդների կազմավորման, դրանց գործունեության կազմակերպման և փոխհամագործակցության ուղեցույցը հաստատելու մասին»:	նյութի գիտակցական ըմբռնում, համայնքային խորհուրդների կազմավորման վերաբերյալ բնակչության հետ տարվող աշխատանքների և փաստաթղթերի վարման կարգի տիրապետում և գործնական վարում, թերացումների և բացթողումների շտկում և վերացում:	տարվող բացատրական աշխատանքների ձևերի ու մեթոդների տիրապետում, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)** **Իրականացվում է 3-րդ ուսումնառության արդյունքի գնահատում:**
Ուսումնառության արդյունք 3:				

10-րդ շաբաթ	**Անհատական և ընդհանուր պրոֆիլակտիկա: ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայողի կողմից անձանց հաշվառելու կարգը:** /դասախոսություն 2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն • Ինտերակտիվ զրույց, • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել համայնքային ոստիկանության կողմից սպասարկվող վարչական տեղամասերում իրականացվող ընդհանուր և անհատական պրոֆիլակտիկ աշխատանքների առանձնահատկությունները, կարգով սահմանված անձանց հաշվառելու և հաշվառումից հանելու հիմքերը, կարգը և ժամկետները: **Քննարկվող հարցերը** **1.**Ընդհանուր և անհատական նախականխիչ /պրոֆիլակտիկ/ աշխատանքների հասկացությունը և տեսակները **2.**Հսկողության ենթակա անձանց հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու հիմքերը, կարգը և ժամկետները: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2.ՀՀ Ոստիկանության պետի	1.Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2.Պրոբլեմային հարցերի քննարկում 3.Ներկայացնել անհատական պրոֆիլակտիկայով հաշվառման ենթակա անձանց ցանկը: 4. Ներկայացնել պատիժը լրիվ կրումով ազատված և կալանավայրերից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց աշվահռման վերցնելու կարգը: 5. Քննարկել ընտանեական-կենցաղային ոլորտում պարբերաբար իրավախախտումներ թույլ տվող անձանց հաշվառման վերցնելու հիմքերը և առանձնահատկությունները: 6. Ներկայացնել հսկողական քարտերով հաշվառման ենթակա անձանց նկատմամբ տարվող անհատական պրոֆիլակտիկ աշխատանքների բնութագիրը և առանձնահատկությունները:	**Ընթացիկ գնահատում.** Հետադարձ կապ-վերլուծություն Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Ընդհանուր և անհատական պրոֆիլակտիկ աշխատանքների վերաբերյալ սեփական տեսակետների արտահայտում, վերլուծողական կարողություն. հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**

		13.01.2015թ. թիվ 11-Ա հրամանը «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց կարգը հաստատելու մասին», 3.Ողեցույց «Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար» 2013թ.		
10-րդ շաբաթ	**Անհատական և ընդհանուր պրոֆիլակտիկա: ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայողի կողմից անձանց հաշվառելու կարգը:** /սեմինար 2 ժամ/	**Տեսակը՝ Սեմինար** • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը անհատական պրոֆիլակտիկայով անցնող անձանց հաշվառման վերցնելու տեսակների, հիմքերի, կարգի և ժամկետների վերաբերյալ, բացահայտել նրանց կարողությունները հաշվառման մեջ գտնվող անձանց հետ տարվող աշխատանքների իրականացման և համապատասխան փաստաթղթերի վարման	1. Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2. Պրոբլեմային հարցերի քննարկում 3.Ընդհանուր և անհատական նախականխիչ /պրոֆիլակտիկ/ աշխատանքների հասկացության և տեսակների ներկայացում 4.Անձանց հաշվառման վերցնելու հիմքերի և կարգի քննարկում, հաշվառման տեսակների և վարվող փաստաթղթերի ներկայացում: 5.Թեմայի պատմողական նկարագրական վերարտադրություն, տրամաբանության և հաջորդականության ապահովում, հսկողության մեջ գտնվող անձանց հետ տարվող աշխատանքների ձևերի և մեթոդների տիրապետում:	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն,անհատակն հաշվառման ենթակա անձանց թվարկում, հաշվառման տեսակների իմացություն, հաշվառման վերցնելու հիմքերի նշում և պարզաբանում, պրոֆիլակտիկ գործերին և հսկողական քարտերին ներկայացվող պահանջներին տիրապետում, հսկողությամբ անցնող անձանց հետ տարվող բացատրական աշխատանքների ձևերի ու մեթոդների տիրապետում, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն

		գործևնթացում: **Քննարկվող հարցերը** **1.** Ընդհանուր և անհատական նախականխիչ /պրոֆիլակտիկ/ աշխատանքների հասկացությունը և տեսակները 2. Պրոֆիլակտիկ գործերով անցնող անձանց հաշվառման վերցնելու հիմքերը և կարգը: 3. Հսկողական քարտերով անցնող անձանց հաշվառման վերցնելու հիմքերը և կարգը **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2.ՀՀ Ոստիկանության պետի 13.01.2015թ. թիվ 11-Ա հրամանը «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց կարգը հաստատելու մասին», 3.Ողեցույց «Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար» 2013թ.		**(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**
11-րդ	**Անհատական և**	**Տեսակը՝** գործնական	1. Գործնական աշխատանքի	Հետադարձ կապ-վերլուծություն

շաբաթ	**ընդհանուր պրոֆիլակտիկա: ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայողի կողմից անձանց հաշվառելու կարգը:** /գործնական 2 ժամ/	• հարցուպատասխան • բանավեճ-քննարկում • գրավոր աշխատանք **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը անհատական պրոֆիլակտիկայով անցնող պատիժը լրիվ կրումով և պայմանական վաղաժամկետ ազատված անձանց, ինչպես նաև «Անհաշտ ընտանիքների» և «Անհաշտ հարևանների» վերաբերյալ պրոֆիլակտիկ գործեր կազմելու կարողությունը:	վերաբերյալ հարցերի ներկայացնում: 2. Ամիրաժեշտ փաստաթղթերի տեսակների ներկայացում: 3. Պրոֆիլակտիկ գործեր կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերի տրամադրում: 4. Պրոբլեմային հարցերի քննարկում:	Անհատական պրոֆիլակտիկայով անցնող պատիժը լրիվ կրումով և պայմանական վաղաժամկետ ազատված անձանց, ինչպես նաև «Անհաշտ ընտանիքների» և «Անհաշտ հարևանների» վերաբերյալ պրոֆիլակտիկ գործերր ինքնուրույն կազմում **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**
12-րդ շաբաթ	**Անհատական և ընդհանուր պրոֆիլակտիկա: ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայողի կողմից անձանց հաշվառելու կարգը:** /գործնական 2 ժամ /	**Տեսակը՝** գործնական • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում • գրավոր աշխատանք **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը անհատական պրոֆիլակտիկայով անցնող Արդարադատության նախարարության պրոբացիոն ծառայություններում, Առողջապահական հիմնարկներում հաշվառման մեջ գտնվող, ինչպես նաև պոռնկությամբ, մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ	1. Գործնական աշխատանքի վերաբերյալ հարցերի ներկայացում 2. Ամիրաժեշտ փաստաթղթերի տեսակների ներկայացում 3. Հսկողական քարտերի ձևաթղթերի տրամադրում: 4. Պրոբլեմային հարցերի քննարկում:	Հետադարձ կապ-վերլուծություն Պարզել անհատական պրոֆիլակտիկայով անցնող՝ ա/ պրոբացիոն ծառայություններում հաշվառված անձանց վերաբերյալ սովորողների կողմից Հսկողական քարտերի ինքնուրույն կազմելու կարողությունը բ/ առողջապահական հինմարկներում հաշվառված շրջապատի համար վտանգ ներկայացնող հոգեկան հիվանդների, ինչպես նաև հարբեցողությամբ կամ թմրամոլությամբ տառապող անձանց վերաբերյալ սովորողների կողմից Հսկողական քարտերի ինքնուրույն կազմելու կարողությունը գ/ պոռնկությամբ զբաղվող անձանց

		զբաղվող անձանց վերաբերյալ հսկողական քարտեր կազմելու կարողությունը		վերաբերյալ Հսկողական քարտերի ինքնուրույն կազմելու կարողությունը; **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)** **Իրականացվում է 4-րդ ուսումնառության արդյունքի գնահատում:**
Ուսումնառության արդյունք 4:				
12-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայողների կողմից փաստաթղթերի վարման կարգը:** /դասախոսություն 2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն • Ինտերակտիվ զրույց, • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել համայնքային ոստիկանության կողմից վարվող փաստաթղթերի տեսակները, դրանց վարման կարգը և հիմքերը: **Քննարկվող հարցերը** 1. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության տեսուչների կողմից տեղամասի անձնագրի վարման կարգը: 2. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության տեսուչների կողմից աշխատանքային տետրի վարման կարգը: 3. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության տեսուչների կողմից հսկիչ և տեղեկատու քարտերի վարման կարգը 4. ՀՀ ՆԳՆ համայնքային	1.Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2.Պրոբլեմային հարցերի քննարկում 3.Ներկայացնել համայնքային ոստիկանության կողմից վարվող փաստաթղթերի տեսակները, դրանց վարման կարգը և հիմքերը:	**Ընթացիկ գնահատում** Հետադարձ կապ-վերլուծություն Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**

		ոստիկանության կողմից միասնական հաշվառման մատյանի և «Պրոֆիլակտիկա» հաշվետվության ձևի վարման կարգը **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2.ՀՀ Ոստիկանության պետի 13.01.2015թ. թիվ 11-Ա հրամանը «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց կարգը հաստատելու մասին»:		
13-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության ծառայողների կողմից փաստաթղթերի վարման կարգը:** /գործնական 2 ժամ/	**Տեսակը՝** գործնական • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում • գրավոր աշխատանք **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը համայնքային ոստիկանության տեսուչների կողմից վարվող փաստաթղթերի տեսակների վերաբերյալ և դրանց կազմելու կարողությունը	1. Գործնական աշխատանքի վերաբերյալ հարցերի ներկայացում 2. Ամիրաժեշտ փաստաթղթերի տեսակների ներկայացում 3. Տեղամասի անձնագրի և Աշխատանքային տետրի նմուշների տրամադրում: 4. Անհրաժեշտ ձևաթղթերի տրամադրում: 4. Պրոբլեմային հարցերի քննարկում:	Հետադարձ կապ-վերլուծություն Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, ներկայացված փաստափղփերի լրացման և վարման աշխատանքներում ստեղծագործական մոտեցման առկայություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի) Իրականացվում է 5-րդ ուսումնառության արդյունքի գնահատում:**
Ուսումնառության արդյունք 5:				

14-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները տարածքի օպերատիվ իրավիճակի ուսումնասիրման, հանցագործության դեպքերի կանխարգելման ուղղությամբ:** /դասախոսություն 2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն • Ինտերակտիվ զրույց, • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել համայնքային ոստիկանության կողմից սպասարկվող տեղամասերում առկա խնդիրների տեսակները, հանցագործություններ և այլ իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանման ու դրանց վերացման ուղղությամբ իրականացվող անհրաչեշտ դործառույթները: **Քննարկվող հարցերը** 1. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները տարածքի օպերատիվ իրավիճակի ուսումնասիրման, վերլուծության և արձագանքման ուղղությամբ /SARA մոդելի ներկայացումլ/ **2.** ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները հանցագործության դեպքերի կանխարգելման ուղղությամբ: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված	1.Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2.Պրոբլեմային հարցերի քննարկում 3.Ներկայացնել համայնքային ոստիկանության կողմից տարածքի օպերատիվ իրավիճակի ուսումնասիրման, իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերլուծության, դրանց վերացման ուղղված միջոցառումների իրականացման ռազմավարությունը ըստ SARA մոդելի:	**Սկզբնաղբյուրների մշակում-զրույց** Հետադարձ կապ-վերլուծություն Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն Հետադարձ կապ-վերլուծություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**

		Կարգ 2.ՀՀ Ոստիկանության պետի 13.01.2015թ. թիվ 11-Ա հրամանը «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց կարգը հաստատելու մասին» 3.Ողեցույց «Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար» 2013թ.		
15-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները տարածքի օպերատիվ իրավիճակի ուսումնասիրման, հանցագործության դեպքերի կանխարգելման ուղղությամբ:** /գործնական 2 ժամ/	**Տեսակը՝** գործնական • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում • գրավոր աշխատանք **Նպատակը՝** Ստուգել ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության կողմից սպասարկվող տեղամասերում առկա խնդիրների տեսակների, հանցագործություններ և այլ իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանման ու դրանց վերացման ուղղությամբ իրականացվող անհրաժեշտ դործառույթների իմացությունը, SARA մոդելի հիման վրա նախականխիչ աշխատանքների	Գործնական աշխատանքի վերաբերյալ հարցերի ներկայացում 2. Ամիրաժեշտ փաստաթղթերի տեսակների ներկայացում 4. Պրոբլեմային հարցերի քննարկում:	Հետադարձ կապ-վերլուծություն Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն, հիմնավորող օրինակների ներկայացում, SARA մոդելով «Վերլուծական եռանկյունու» մեկնաբանման և կազմման կարողություն, ստեղծագործական մոտեցման առկայություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**

		ռազմավարության տիրապետման մակարդակը **Քննարկվող հարցերը** 1. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթները տարածքի օպերատիվ իրավիճակի ուսումնասիրման, վերլուծության և արձագանքման ուղղությամբ 2. SARA մոդելով, Վերլուծական եռանկյունու, կազմում; **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2.Ողեցույց «Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար» 2013թ.		
15-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործունեության հրապարակայնությունը և գնահատումը** /դասախոսություն 2 ժամ/	**Տեսակը՝** դասախոսություն • Ինտերակտիվ զրույց, • դասախոսություն (ավանդական) **Նպատակը՝** ներկայացնել հրապարակայնության և թափանցիկության նշանակությունը և դրանց իրականացման ձևերը համայնքային ոստիկանության աշխատանքներում, **Քննարկվող հարցերը**	1.Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2.Պրոբլեմային հարցերի քննարկում 3.Ներկայացնել համայնքային ոստիկանության կողմից կատարած աշխատանքների հաշվետվության ձևերն ու միջոցները: 4.Ներկայացնել համայնքային ոստիկանության տեսուշների աշխատանքների գնահատման չափորոշիչները:	**Ընթացիկ գնահատում.** Հետադարձ կապ-վերլուծություն Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն **(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)**

		1.Հրապարակայնության ապահովումը ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության աշխատանքներում: 2.Համայնքային ոստիկանության տեսուչների գործունեության չափորոշիչները: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2.«Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց - ձեռնարկ». ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ. Ե. 2007 թ. 3.Համայնքային հիմունքներով ոստիկանության գաղափարախոսությունը և սկզբունքները,, SEESAC, Երևան, 2006 թ.		
16-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության լիազորությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում:** /դասախոսություն 2 ժամ/	**Տեսակը՝ Սեմինար** • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում **Նպատակը՝** Ներկայացնել ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպաիրավական հիմքերը, ընտանիքում բռնության ենթարկված անձանց	1.Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2.Պրոբլեմային հարցերի քննարկում 3.Ընտանիքում բռնության հասկացությունը և տեսակները: 4. Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակները: 5. Ընտանիքում բռնության	**Ընթացիկ գնահատում.** **Հետադարձ կապ-վերլուծություն** Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ, հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն

		պաշտպանության բնագավառում համայնքային ոստիկանության լիազորությունները: **Քննարկվող հարցերը** 1.Ընտանիքում բռնությունը և նրա տեսակները 2.Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները: 3. Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և հատուկ կառույցները: 4.ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության լիազորությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում: **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության	ենթարկված և բռնություն գործադրած անձանց հաշտեցման առանձնահատկությունները: 6.Համայնքային ոստիկանության լիազորությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում	

		վերականգնման մասին» 13.12.2017թ. ՀՀ Օրենք; 3. «Ընտանեկան բռնություն» Ձեռնարկ ոստիկանության համար: Կանանց իրավունքների կենտրոն: Երևան, 2010 թ. 4. Շտեմարան: Ընտանեկան բռնության զոհերին աջակցություն տրամադրող սոցիալական ծառայությունների քարտեզագրում: Ընտանեկան բռնության հարցերով ոստիկանության կարողությունների ծրագիր; Երևան, 2016 թ.		
16-րդ շաբաթ	**ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության լիազորությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում:** /սեմինար 2 ժամ/	**Տեսակը՝ Սեմինար** • հարցուպատասխան • բանավեճ-քննարկում **Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը ընտանեկան բռնության հասկացության, նրանց տեսակների, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միձոցների, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող համայնքային ոստիկանության տեսուչների իրավունքներն ու պարտականությունները:	1 Թեմայի և ուսումնական հարցերի ներկայացում 2. Պրոբլեմային հարցերի քննարկում 3.Ընտանիքում բռնությունը և նրա տեսակները 4.Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները: 5.Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և հատուկ կառույցները: 6.Համայնքային ոստիկանության լիազորությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում:	**Ընթացիկ գնահատում.** Ակտիվություն, հարցերի առաջադրում, վերլուծողական ունակություններ Թեմայի իմացություն, վերլուծողական կարողություն, խոսքի գրագիտություն, ընտանեկան բռնության հասկացության, նրանց տեսակների, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միձոցների, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող համայնքային ոստիկանության տեսուչների իրավունքներն ու պարտականությունները ներկայացում. հիմնավորող օրինակների ներկայացում, ստեղծագործական մոտեցման առկայություն

		Քննարկվող հարցերը 1.Ընտանիքում բռնությունը և նրա տեսակները 2.Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները: 3.Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և հատուկ կառույցները: 4. ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության լիազորությունները ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում 3.Հսկողական քարտերով անցնող անձանց հաշվառման վերցնելու հիմքերը և կարգը **Տեղեկատվական նյութեր՝** 1.ՀՀ Կառավարության 06.11.2014 թ. թիվ 1254 –Ն Որոշումով հաստատված Կարգ 2. «Ընտանիքում բռնության կանխարգելման , ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության		**(Գնահատման չափանիշները և չափորոշիչները համաձայն ներկայացված օրինակելի ձևի)** **Իրականացվում է 6-րդ ուսումնառության արդյունքի գնահատում:**

		վերականգնման մասին» 13.12.2017թ. ՀՀ Օրենք; 3. «Ընտանեկան բռնություն» Ձեռնարկ ոստիկանության համար: Կանանց իրավունքների կենտրոն: Երևան, 2010 թ. 4. Շտեմարան: Ընտանեկան բռնության զոհերին աջակցություն տրամադրող սոցիալական ծառայությունների քարտեզագրում: Ընտանեկան բռնության հարցերով ոստիկանության կարողությունների ծրագիր; Երևան, 2016 թ.		
Ուսումնառության արդյունք 6:				

Տեսակը՝ավանդական և բանավեճային դասախոսություն, սեմինար և գործնական պարապմունքներ:
Նպատակը՝ ներկայացնել համայնքային ոստիկանության հասկացությունը, գաղափարախոսությունը և ռազմավարությունը, նրա ներդրման անհրաժեշտությունը ՀՀ-ում, համայնքային ոստիկանության նպատակները, իրավական և կազմակերպչական հիմունքները, սկզբունքները, մեթոդները, գործառույթները, պրոֆիլակտիկայի ձևերը և դրանց իրականացման հիմքերը և կարգը, գործառույթները հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման ուղղությամբ, հանրության հետ փոխվստահության հաստատման ռազմավարությունը, հրապարակայնությունը և թափանցիկությունը ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գործառույթներում աշխատանքների գնահատման չափորոշիչները:

ԿԱԶՄԵՑ՝ ԴԱՍԱԽՈՍ Վ. ԱՎԱԳԻՄՅԱՆ